Արձանագրություն N 2

<< ԿՄՀՀ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների հայտերի բացման և գնահատման նիստի մասին

Գ. Ջորավան

«25» Հուլիսի 2017թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	Անուշ Մնացականյան – Ջորավան համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Հանձնաժողովի անդամներ՝	Վանիկ Խանաղյան – Ջորավան համայնքապետարանի կոմունալ ծառայության մասնագետ
	Նունե Անտոնյան – Ջորավան համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
Գնումների համարագող՝	Հասմիկ Մխիթարյան - Ջորավան համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1.Հայտերի բացման վայրի, օրվա և ժամվա մասին

ՀՀ Կոտայքի մարզի Ջորավան համայնքի կարիքների համար հայտարարված «ԿՄՀՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցումով գնման հայտերի բացումը տեղի է ունեցել ՀՀ Կոտայքի մարզ գ.Ջորավան 1-ին փողոց շենք 19 հասցեում, 2017թ-ի հուլիսի 25-ին, ժամը 10:30-ին:

Վերոնշյալ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման նախահաշվային գինը կազմում է 12284580 (տասներկու միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ Կոտայքի մարզի Ջորավանի համայնքապետարանի կողմից կազմակերպված գնմանը հայտ են ներկայացրել

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
«Մ.Ո.Գ.-ՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Պռոշյան 27, հեռ (+374 93) 93 80 20
«Վահրադյան Շին» ՍՊԸ	ՀՀ ք.Ստեփանավան Չարենցի 175 հեռ 077880599
«Վթարշին» ՍՊԸ	ՀՀ ք.Երևան Գ 3 թաղ 25/35 հեռ 093759672
«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ ք.Երևան, Վարդանանց 8 Հեռ.093034044

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակցի կողմից ներկայացված հայտերի ծրարները կազմված են և ներկայացված են հրավերների պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մասնակցի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Բացի «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ից, որում վճարման պահանջագրում բացակայում է արժույթը և կոդը: Որը չի համապատասխանում ՀՀ Կառավարության 04.05.2017թ թիվ 526-ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	Չ/Հ1	Չ/Հ1
«Մ.Ո.Գ.- ՇԻՆ» ՍՊԸ	5495000	5495000
«Վահրադյան Շին» ՍՊԸ	8300000	9960000
«Վթարշին» ՍՊԸ	6966666	6966666
«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ	2000000	2400000

7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

8. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

<< ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման մասով /ընտրված/ մասնակից է ճանաչվում «Մ.Ո.Գ.-ՇԻՆ» ՍՊԸ-ը՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի:

Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել մինչև 3 /երեք/ աշխատանքային օրով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի՝ ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի

3-րդ մասի համաձայն, ՀՀ Ֆինանսների նախարարությունից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017թ-ի հուլիսի 28-ին ժամը 10:30-ին, ՀՀ Կոտայքի մարզ գ. Զորավան 1-ին փողոց շենք 19 հասցեում, (ՀՀ Կոտայքի մարզի Զորավանի համայնքապետարանում):

Հանձնաժողովի

Նախագահ՝ **Անուշ Մնացականյան**

Անդամներ՝ **Վանիկ Խանաղյան**

Նունե Անտոնյան

Քարտուղար՝ **Հասմիկ Մխիթարյան**